

Իրավունք մշակույթ

Հիմնադրվել է 1998 թ. օգոստոսի 6-ին
www.acrpc.am
Իրավունքի և մշակույթի կենտրոն
ԱԻԲԻ ԱՍՈՑԻԵՏԱՍ ԻԲԻ ՅԱՍ

Երկշաբաթեթ
թիվ 10 (13)
2007 թ. սեպտեմբերի 15

ԵՐԲ ԶՈՒՐ

ՀԱԿՈՐ ԾԱՀԱՄԻՐՅԱՆ

ԱՐԴԱՐԱԳԱՏՈՒԹՅՈՒՆՆ Է...

Ինը տարի առաջ՝ 1998թ. օգոստոսի 6-ին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի աշխատասենյակում սպանվեցին ինը՝ հանրապետության գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանը, և գլխավոր դատախազության քրեական-դատական բաժնի դատախազ Արամ Կարապետյանը:

Այդ ահաբեկչությունից առաջ գլխավոր դատախազը լրատվամիջոցներով հայտարարել էր, որ շուտով վերջապես կբացահայտվեն աղմկահարույց սպանությունները կատարողները...

Դատապարտության, բողոքի ու ցավակցական բազմաթիվ հայտարարությունների շարքում տարածվեց նաև ՀՍԻԿ-ի 1998թ. օգոստոսի 7-ի հայտարարությունը, ուր մասնավորապես ասված էր.

«Հենրիկ Խաչատրյանը Հայաստանում անկախ դատական իշխանության, օրինակամության համար պայքարի առաջին գոհն է:

Աջակցություն հայտնելով ժողովրդավարության և իրավունքի տիրապետության համար պայքարող ուժերին և ի հեճուկս օրինակամության, Մարդու իրավունքների և Հայաստանի ժողովրդավարացման հակառակորդների՝ կոչ ենք անում ՀՀ նախագահին, ՀՀ կառավարությանն ու ժողովրդին նվիրված բոլոր ուժերին՝

1. Հետևողականորեն շարունակել այսպես կոչված «աղմկահարույց» սպանությունների ու ծանր հանցագործությունների քննությունը՝ անտեսելով ցանկացած դիրք, պաշտոն ու հեղինակություն:

2. Բացահայտել և օրենքով պատասխանատվության կանչել բոլոր հանցագործությունների կազմակերպիչներին ու կատարողներին:

3. Միջոցներ հատկացնել և ուժեղացնել դատական իշխանության անկախությունը: Հանրավոր չէ անկախ դատական իշխանություն ունենալ, եթե ապահովված չէ դատավորի, դատախազի և նրանց ընտանիքների շուրջօրյա անվտանգությունը:

Զոհված գլխավոր դատախազի հիշատակը պարտավորեցնում է ուժեղացնել օրինակամության համար պայքարը՝ բացառելով բռնությունները և անզամ օրենքի տառի որևէ խախտում հանցագործությունների կատարման մեջ կասկածվող անմահ նկատմամբ...»:

Հանցագործությունը չբացահայտվեց: Օրը գերելով, մայրաքաղաքի կենտրոնում, իր աշխատասենյակում գնդակահարվում է հանրապետության գլխավոր օրինակահեր, և գործը մնում է չբացահայտված ու լրացնում աղմկահարույց այն գործերի շարքը, որոնց Հենրիկ Խաչատրյանը խիզախել էր ընթացք տալ: Անպատեհիության նման անհասարակ մթնոլորտում սպասելի ու «բնական» էր, որ ահաբեկչությունները, չբացահայտվող սպանությունները կշարունակվեն՝ տարածվելով նաև մարզերում: Դրանք իրենց զգաթմանակետին հասան 1999թ. հոկտեմբերի 27-ին, երբ Ազգային ժողովի դաիլիճում գնդակահարվեց երկրի խորհրդարանի ու կառավարության ղեկավարությունը:

2007թ. օգոստոսի 24-ին աշխատանքից տուն գնալու ճանապարհին՝ իր տան մոտակայքում, գնդակահարվեց Լուու մարզային դատախազ Ալբերտ Ղազարյանը:

Ամեն մի հանցագործություն, ամեն մի սպանություն դատապարտելի է ու անբարո: Սակայն հանցագործության վտանգավորությունը շատ ավելի մեծ է, երբ թիրախը, զոհը արդարադատությունն է: Նա, ով կոչված է բացահայտելու և դատապարտելու հանցագործությունը, բռնելու հանցագործի ձեռքը, պահպանելու օրինակամությունը: Հետևաբար, արդարադատության, իշխանության մարմինների դեմ ուղղված հանցագործություններն անհամեմատ ավելի վտանգավոր են, քանի որ ուղղված են պետականության բուն հիմքերի, պետական մարմինների համակարգի դեմ:

Հայտնի է ամշուշտ, որ այսօրվա ոչ դատարանում, ոչ դատախազությունում և ոչ էլ ոստիկանությունում սրբեր չեն նստած, և այդ հաստատությունները կոռուպցիայի ոլորտում «ճանաչված» են (տես Թրանսփերենսի ինթերնեշնլ Հայաստան, «Կոռուպցիայի ընկալումը Հայաստանում - 2006»):

...Ոչ ոք ոչ մեկի վրա իշխելու իրավունք չունի, իսկ նրանց ձեռքի գործերը պետք է վարձատրվեն համապատասխան ամեն մի աշխատանքի՝ ըստ Հայոց օրենքի:

«Որոգայք փառաց», գլուխ 3



Հիրավի, «չկա հասարակություն՝ առանց իրավունքի»: Իրավունքը հասարակական կյանքի կարգավորման որևէ այլընտրանք չունի: Սրանք գեղեցիկ խոսքեր չեն: Այս դրույթն ընկած էր դեռևս հռոմեական իրավական համակարգի հիմքում: Առանց իրավունքի տիրապետության հաստատման՝ քաղաքակիրթ հասարակություն չի կարող լինել: Առանց իրավունքի և արդարության՝ կունենանք մարդկային անբխ, անկազմակերպ բազմություն, բայց ոչ երբեք՝ հասարակություն:

Հետևաբար, չնայած որոշակի հաջողություններին ու նվաճումներին՝ մենք երկուսն առաջընթաց չենք կարող ունենալ, եթե չվերացնենք հասարակության ու պետականության զարգացման ճանապարհին ընկած օրենսդրական խոչընդոտը՝ դատական իշխանության ենթարկվածությունը գործադիր իշխանությանը:

Սակայն Շառլ Լուի Մոնտեսքիոյի՝ իշխանության տարանջատման, իշխանության երեք սերիի հակալիզինների ու փոխզայման մեխանիզմների տեսությունը և «անկախ» դատարանների թեմաները ոմանց համար ընդամենը Ազգային ժողովում կամ մամլո ասուլիսներում արտասանվող ճառերը համեմելու մոդայիկ արտահայտություններ են: Օրինակ՝ իրավունքի տիրապետությունը (Rule of Law) հաճախ չվերբվում է իրավունքի գերակայության կամ օրենքի իշխանության հետ՝ բնվալ չճշտելով, թե ու՞մ կամ ինչի՞՞ նկատմամբ գերակայության կամ իշխանության մասին է խոսքը:

Քաղաքական գաղափարախոսությունների նկատմամբ իրավունքի տիրապետության և իշխանության իրական տարանջատման հնարավորություն էր ստեղծվել 2005թ. նոյեմբերի 27-ի սահմանադրական հանրաքվեի ժամանակ: Սակայն նախ հանրաքվեի դրվեց այդ սկզբունքներից գուրկ (թեև նախորդի համեմատ առաջադեմ) նախագիծ, և հետո, հանրաքվե կազմակերպվեց աննախադեպ անպարտակելի խախտումներով, ու դրանով և մեկ անգամ վարկաբեկվեց 1995թ. «մեղքի մեջ ծնված» և այլևս իսպառ հեղինակազրկված այդ փաստաթուղթը: Հիմնական օրենքում բացակայում է իշխանության իրական տարանջատումը և առաջին հերթին դատական իշխանության անկախությունը: Դատավորը կամ դատախազը ինչպե՞ս կարող է անկախ լինել, եթե նա ըստ սահմանադրության պաշտոնում նշանակվում և պաշտոնանկ է արվում միևնույն մարմնի կողմից: ➔ էջ 2

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- Համընդհանուր կոչ հանուն կրթության. գործողությունների շարքը կկայանա 2008 թ. ապրիլին _____ էջ 2
- Կառուցվում է ծերապարտեզ _____ էջ 3
- Մարդու իրավունքների կրթության ազգային ուսուցողական դասընթացն ավարտվեց _____ էջ 4
- Լեռնապատից բնապահպանների գերդատառնը _____ էջ 4
- «Ես և շրջակա աշխարհը» առարկան տարրական դպրոցում _____ էջ 5
- Երեխաների համաշխարհային խորհրդածողով Նորվեգիայում _____ էջ 5
- Վահե Արսեն. Պոեզիա _____ էջ 6
- Տոն Սուրբ Խաչի (խաչվերաց) _____ էջ 7
- Արամ Առաջին կաթողիկոսի մոր գիրքը _____ էջ 7

էջ 1

Եթե ուզում ենք ուժեղ պետականություն ունենալ, ուրեմն պետք է համարձակվաք գնալ այդ քայլին: Եթե օրինակաբար քաղաքացիներ ենք ուզում լինել, ուրեմն համաձայնենք, որ բոլորս օրենքի առաջ հավասար ենք, ու հնագույն լիքներ օրենքին:

Յե՛ն ասեմանությունը նոր է փոխվել, սակայն անհրաժեշտ է մտածել ժամ առաջ նոր հիմնական օրենք ընդունելու և նրանում առաջին հերթին իշխանության իրական տարանջատման ասպեկտները ու դատական իշխանությանը լիակատար անկախության տրամադրման մասին: Դա հրամայական անհրաժեշտություն է, եթե ուզում ենք վերջ տալ երկիրը պատվազրկող անպատժելիությանը: Քաղաքական և քաղաքացիական կամքի առկայության դեպքում դա ամենևին դժվար չենք լինի չէ: Դատական իշխանությանը լիակատար անկախություն տրամադրելու դեպքում պետական մարմինների համակարգի նկատմամբ որևէ ապստամբի չի կարող ծագել: Ավելին, եթե օրենսդիրն ու գործադիրը երկուստեք երկրյալ կարող են ունենալ՝ միմյանց նկատմամբ իշխանության հնարավոր գերակայման առումով, ապա դատական իշխանության դեպքում ոչ ոք (բացի քրեական հանցագործներից ու բացահայտ չարագործներից) բնավ մտահոգվելու որևէ հիմք չունի, քանզի դատարանը պիտի ղեկավարվի ընդհանրեղ օրենսդրի ընդունած օրենքներով ու իրավունքի և արդարության սկզբունքներով:

Չխոչընդոտենք երկրի զարգացմանը:

Իրավունքի տիրապետումը քաղաքական գաղափարախոսությունների նկատմամբ և օրենքի առաջ հավասարության սկզբունքը միայն այդ դեպքում կկենսագործվեն, ու մեր հասարակությունն, իր զարգացման ճանապարհից այդ իրավական խոչընդոտի վերացումով, կսաջ մայրուղի կելնի:

Ուտտի, Հայաստանի Հանրապետության համար նոր ասեմանությունը ընդունումը՝ որպես դատական իշխանության լիակատար անկախության պայման, կենսական անհրաժեշտություն է:

ԳԵՂՈՐԳ ՍԱՆՈՒԿՅԱՆ



Հանրեդիանություն կոչ հանուն կրթության (ՀԿԳ) քարոզարշավը մի շարժում է, որը խթանում է կրթությունը՝ որպես մարդկային իրավունք, հորդորում կառավարություններին ու միջազգային հանրությանը՝ կատարելու իրենց խոստումները որակյալ, անվճար, պարտադիր հանրեդիանություն կրթության ապահովման վերաբերյալ: 1999թ.-ին ստեղծված ՀԿԳ-ն միավորում է ավելի քան 18 միլիոն մարդկանց և հազարավոր կազմակերպություններին, արմիություններին շուրջ 100 երկրներում:
Հայաստանը քարոզարշավին միացել է 2003թ.-ից: Ստեղծվել է ՀԿԳ Հայաստանյան ազգային միավորում (կոալիցիա), որի աշխատանքները համակարգվում է ՀՍԿ-ի կողմից (www.acrpe.am):

Անբավարար գնահատականներ մեծահարուստ երկրների ղեկավարներին

Երեխաներին տրված խոստումները երբեք չպիտի խախտվեն:
Նեյտոն Սանդեյս

Ամեն տարի ՀԿԳ-ն պահանջում է հարուստ երկրներից պատասխան տալ կրթության վերաբերյալ իրենց տված խոստումների համար՝ կազմելով ինքնատիպ դպրոցական զեկույց՝ նրանում ներկայացնելով այդ երկրների կատարողականության ցուցանիշները: 2007թ.-ին քարոզարշավի մասնակիցները՝ ուսանողներ, ծնողներ, երեխաներ, ակնկալում էին տեսնել հարուստ երկրների՝ 2015թ. ասեմանագծի նպատակներին հասնելու մրցարշավը: Մինչդեռ պարզվում է, որ նրանք արգելակել են առաջընթացը՝ ի դերև հանելով բոլոր նրանց սպասումները, ովքեր համարձակվել էին հուսալ, թե ապագա ոչ մի սերունդ չի ապրելու առանց կրթության լույսի: Հարուստ երկրների ցածր կատարողականության պատճառով միլիոնավոր երեխաներ զրկվել են դպրոց հաճախելու հնարավորությունից: Ըստ ՀԿԳ-ի մի քանի չափորոշիչների՝ կազմվել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության 22 ամենահարուստ երկրների դասակարգման աղյուսակ: Պարզվում է, որ ԱՄՆ-ը, ճապոնիան, Պերուիան և Իտալիան ամենագծու հարուստ երկրներն են, որոնք միասին հատկացնում են ընդամենը 10%-ն այն գումարի, որն անհրաժեշտ է մինչև 2015թ. յուրաքանչյուր երեխայի կրթության ապահովման իրենց խոստումները իրականացնելու համար: Ապշեցուցիչ է, որ Ձորը Բուշը ամենահարուստ երկրի նախագահը, դասակարգման աղյուսակում՝ զբաղեցնում է 20-րդ տեղը: Նրանից ետ են մնում միայն Հունաստանը և Ավստրիան՝ զբաղեցնելով դասակարգման ամենատարած հորիզոնականները: Ամենաբարձր ցուցանիշներ արձանագրած և դասակարգման ամենաբարձր առաջին երեք տեղերն զբաղեցրած երկրներն են՝ Նիդեռլանդները, Նորվեգիան և Դանիան (Աղյուսակն ամբողջությամբ ձեռ ուշադրությանը կներկայացվի թերթի հաջորդ համարում):

ՈՒՍՈՒՆԵՆԻ ԱՆՓՈՒԿԱՔԵՐԹ-ՂԻՏՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Teacher's Remarks:
Angela found her place in the class well and won the respect of her classmates quickly. As for class representative this year, she is supposed to... her initial performance is... but she needs to... her own goal... until 2010 and... she needs to im... to basic... in the... needed for... " is a shame especially given her role as the spokesperson of the Fast Track Initiative Education for All."




Գերմանիայի կանցլեր Անգելա Մերքել

Որպես Մեծ ութնյակի ներկայացուցիչ՝ Անգելան պետք է ձգտի օրինակ ծառայել: Նրա «Ե» գնահատականը «Կրթության մատչելիության ապահովում» անվանակարգում ամոթալի է, եթե նկատի ունենանք հազարամյակի նպատակին հասնելու ճանապարհին խոստովանած նրա դերը:

Ֆրանսիայի նախկին նախագահ ժակ Շիրակ

Նկատելի է միջնակարգ կրթության համար ժակի հատկացումների չնչին աճ: Բայց նա շարունակ նախապատվությունը տվել է կրթության մյուս մակարդակներին, ինչը լուրջ մտահոգության տեղիք է տալիս:

Teacher's Remarks:
George has decided the shame of being bottom of the class, but his scores are still very disappointing given that he has so much promise. He seems to pay more attention in most... especially in... we still... students this... needs to put... in a big effort in this... work.




Միացյալ Նահանգների նախագահ Ձորը Բուշ

Ձորը խոսք տվել էր դասակարգման սանդղակի ամենավերջին տեղում հայտնվելու խայտառակությունից: Առայժմ նրա միավորները խիստ հիասթափեցնող են, հատկապես եթե հաշվի առնվեն իր իսկ տված խոստումները:

Կանադայի վարչապետ Սթիվեն Հարփեր

Մենք ավելի մեծ ակնկալիքներ ունենինք Սթիվենին: Տարիներ շարունակ նա հետևողականորեն, տնայնացան աշխատել է և զգալի արդյունքների հասել գրեթե բոլոր անվանակարգներում: Սակայն նա բերանում է ընդհանուր օգնության հարցում: Եթե նա կարողանա իր ուժերը համախմբել այս ոլորտում, ապա շատ արագ կհայտնվի դասակարգման սանդղակի վերին տեղերում:

Teacher's Remarks:
Roman has been distracted this year, but has not lived up to his potential. It is no surprise to find him in... spent at least... fortune at being... he needs to... by assistance... to the med... great stress... of his promise... sticks to his... with increased... both consider... further backing for... in this money, if he wants a better report in future.



Իտալիայի նախագահ Ռոմանո Բրոդի

Այս տարի Ռոմանոն ամուշադիր է եղել և իր հնարավորություններից ցածր է աշխատել: Ձարմանալի չէ, որ նա դասակարգման ճիշտ նույն տեղում է, ինչ անցած տարի էր: Դա հիասթափեցնող է, հատկապես եթե նկատի ունենանք նրա՝ Մեծ ութնյակի կազմում գտնվելու քախտավորությունը:

Միացյալ Թագավորության նախկին վարչապետ Թոնի Բլեյր

Մենք գոհ ենք Թոնի Բլեյրի առաջադիմությունից, բայց կշարունակենք հետևել նրան համոզվելու, որ նա կատարում է իր խոստումները, որպեսզի դասակարգման սանդղակում ավելի վեր բարձրանա:

Մենք՝ քաղաքացիական Հասարակությունը



Կառուցվում է ծերապարտեզ ...

«Ես չեմ կարող հարգել այն ընտանիքը, ուր տարեցներին մնացորդային ուշադրություն է դարձվում»:

Հռիփսիմեն Կիրակոսյան
«Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի նախագահ



1988 թվականից երկրում սկիզբ առած սոցիալ-քաղաքական ճգնաժամն առավել ծանր ազդեցություն ունեցավ հասարակության խոցելի շերտերից մեկի՝ տարեց բնակչության վրա: Վերջիններս ոչ միայն հայտնվեցին սոցիալական ծայրահեղ վատ պայմաններում, այլև կրեցին հոգեբանական լուրջ հարվածներ և մեկուսացան հասարակությունից: Եվ չնայած այսօր տարեցների համար մի շարք սոցիալական խնդիրներ կարծես թե լուծված են, այնուամենայնիվ, նրանց հոգևոր մեկուսացման խնդիրն ամբողջովին լուծված չէ:

Այդ դժվարին ժամանակներում ի հայտ եկան մի շարք բարեգործական կազմակերպություններ, ստեղծվեցին միջազգային հիմնադրամներ, որոնք զբաղվում էին հիմնականում փախստականների և երկրաշարժից տուժածների խնդիրներով, սակայն տարեցների հիմնախնդիրները մնում էին օդում կախված: Այդ ժամանակ էր, որ համախոհներից բաղկացած մի խումբ կամավորներ սկսեցին գործունեություն ծավալել ի նպաստ ոչ միայն երկրաշարժից տուժածների և փախստականների, այլև տարեցների:

Սկզբում տարերայնորեն գործող կամավորական խումբն իր գործունեությունը ծավալում էր ըստ հնարավորության, սակայն աստիճանաբար այդ խումբը համալրվում էր նորանոր կամավորներով, և 1993 թվականին այն արդեն լուրջ կառույց էր՝ զինված հստակ ծրագրերով և նպատակներով: Դեռևս այդ տարի էլ կազմակերպությունը պաշտոնապես գրանցվեց որպես «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն, որի նախագահ դարձավ կամավորական խմբի հիմնադիր և ակտիվ գործիչ Հռիփսիմեն Կիրակոսյանը:

Այդ օրվանից սկսած՝ կազմակերպությունն աճել և դարձել է հզոր մի կառույց, որը համալրված է շուրջ 500 արհեստավարժ աշխատակիցներով և իր գործունեությունն է ծավալում ոչ միայն մայրաքաղաքում, այլև հանրապետության 8 մարզերում: Շուրջ 8000 միայնակ և անապահով տարեցների, ինչպես նաև 7000 փախստականների մատուցվում են մի շարք ծառայություններ կազմակերպության ենթակառույցների միջոցով, որոնք են՝ 32 բարեգործական ճաշարան, 16 համայնքային կենտրոն, 41 բուժկետ, 2 առողջապահական-վերականգնողական կենտրոն, 16 ուսուցողական ռեսուրս կենտրոն, սոցիալ-առողջապահական շրջիկ քիմեր, մարզային մասնաճյուղեր, գրադարաններ և այլն:

Ավելի քան 5000 շահառուներ ամեն օր տաք կերակուր են ստանում բարեգործական ճաշարաններում, իսկ նրանց համար, ովքեր ի վիճակի չեն տեղաշարժվելու, սնունդը տուն է տարվում: Ըստ հաշիվների ստանում են նաև բժշկական ծառայությունների՝ ախտորոշում,

առաջին բուժօգնություն, անվճար դեղորայք, մատուցվում են նաև ծերաբանական, հոգեբանական, բժշկական, իրավաբանական խորհրդատվություններ, կազմակերպվում դասընթացներ, տնային անհատական խնամք անշարժողունակ տարեցների համար, տարեցների և փախստականների բնակարանների մասնակի կամ ամբողջական վերանորոգում, մասնագիտական դասընթացներ, առարկայական ուսուցումներ, ամառային բակային ճամբարներ փախստականների երեխաների համար և այլն: Այս ծառայությունների գլխավոր առանձնահատկությունն ու առավելությունն այն է, որ դրանք մատուցվում են անմիջապես համայնքներում՝ չկտրելով շահառուներին իրենց հարազատ միջավայրից:



Այսպիսով՝ «Առաքելություն Հայաստան» հասարակական կազմակերպությունը մշակել է երկրում ներդրել է սոցիալ-առողջապահական աջակցության բոլորովին նոր մոդել, որի հիմքում ընկած է կարիքավոր բնակչությանը համայնքային սոցիալ-առողջապահական և զարգացողական ծառայությունների մատուցումը: Կազմակերպությունը փորձարկել, ներդրել և տարածել է նաև սոցիալական ծառայությունների այլ մոդելներ. «Զերմիկ անկյուն» համայնքային սոցիալ-առողջապահական ծառայություններով ապահովված փորձական խմբային տուն մտավոր և ֆիզիկական անկարողություններ ունեցող երիտասարդների համար, որտեղ ստեղծված է բնակարանային և ընտանեկան ջերմ միջավայր. ոչ պետական ծերանոց Սյունիքի մարզի Արծվանիկ գյուղում՝ միայնակ և շուրջօրյա խնամքի կարիք ունեցող տարեցների համար. սոցիալ-առողջապահական կենտրոն. սոցիալական տուն տարեցների համար. կառուցվում է ժամանակակից բոլոր հարմարություններով ապահովված սոցիալական կենտրոն, որի 34 մեկեսեյականոց բնակարանները կտրամադրվեն անունով տարեցներին, ուր նրանք կարող են բնակվել մինչև կյանքի վերջ՝ անվճար օգտվելով կենտրոնի ծառայություններից. ծերապարտեզ, որտեղ տարեցներն ակունքային հիմունքներով բովանդակակից կանցկացնեն իրենց առօրյան: Այստեղ կգործի նաև վերականգնողական կենտրոն շուրջօրյա խնամքի կարիք ունեցող շահառուների համար: Եշտե՞ք, որ կազմակերպության կողմից ստեղծված և ներդրված համայնքային սոցիալական ծառայությունների մատուցման

Հարգելի՛ հասարակական կազմակերպություններ,

«Իրավական մշակույթ» երկաթաբաթերի թայում է տոր խորագիր՝ «Մենք՝ քաղաքացիական հասարակությունը», որի ներքո պարբերաբար կներկայացվեն Հայաստանում գործող հասարակական կազմակերպությունները: ՀԿ-ները կներկայացվեն ըստ մարզերի, այբբենական հաջորդականությամբ համապատասխան որևէ ՀԿ-ի մասին տեղեկությո՞ւն չի ներու դեպքում կտպագրվի հաջորդ մարզից առաջինը պատշաճ տեղեկությո՞ւն ներկայացրած՝ ՀԿ-ն:

Խորագիրն սկսում ենք «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի ներկայացմամբ: Հանդիպած ենք, որ այս նախաձեռնությունը կնպաստի ՀԿ սեկտորի ճանաչմանը և հետևաբար նաև հզորացմանն ու ծառայությունների որակի բարելավմանը: Եթե յառկաում եք՝ ձեր կազմակերպությունը ներկայացվի «Իրավական մշակույթ» թիթթում, ապա խնդրում ենք ուղարկել անխաղ խմբագրված տեղեկությո՞ւն ձեր հասարակական կազմակերպության, նրա առաքելության, նախատեսվող և իրականացված ծրագրերի, քաղաքացիների մատուցվող ծառայությունների մասին:

Ծանկալի է, որ տեղեկությո՞ւն լինի էլեկտրոնային տարբերակով, 1-1,5 A4 էջի սահմաններում՝ Arial Armenian 10 տառաչափով: Ուղարկեցե՛ք նաև 1-2 լուսանկար 300 ժբի խտությամբ:

«Իրավական մշակույթ»-ի խմբագրակազմ

մոդելը կիրառվել է նաև Կրաստանում, Ադրբեջանում, Ղազստանում:

«Առաքելություն Հայաստան» հասարակական կազմակերպությունը լուրջ գործընկեր է միջազգային այնպիսի խոշոր կազմակերպությունների համար, ինչպիսիք են ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալությունը, ՄԱԿ-ի Փախստականների գերագույն հանձնակատարի գրասենյակը, շվեդական կառավարությունը, Զարգացման և համագործակցության շվեյցարական գործակալությունը, «Բժիշկներ առանց սահմանի» բելգիական կազմակերպությունը և այլն: Բացի այդ, կազմակերպությունը սերտորեն համագործակցում է նաև տեղական իշխանությունների հետ. համայնքներում ծառայությունները մատուցվում են տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ ֆինանսավորմամբ:

Քանի որ Հայաստանը վերջին տարիների տնտեսական աճի բարձր ցուցանիշներ է արձանագրում, արտասահմանյան դրամաշնորհատու կազմակերպություններն աստիճանաբար նվազեցնում են իրենց ծրագրերի իրականացումը մեր երկրում: «Առաքելություն Հայաստան»-ը նույնպես իր գործունեությունը իրականացնում է օտարերկրյա կազմակերպությունների աջակցությամբ: → էջ 4

ԲՆԱՊԱՀՊԱՆՆԵՐԻ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ

Մայր ու որդի Սեդա և Բարսեղ Եսայանները Լեռնապատի «Լեռնապար» խմբի տարեց անդամներից են: 75-ամյա Սեդա Եսայանը գյուղում հայտնի է նաև որպես բազմազավակ մայր. 5 որդի, 2 դուստր, 27 թոռ և 6 ծոռ ունի: Նրանց ընտանիքը գյուղում և մարզում ճանաչված լինելու մեկ պատճառ է ևս ունի. Բերքի տոնի կապակցությամբ Եսայանների ընտանիքին շնորհվել է Լոռու մարզպետարանի սահմանած «Լավագույն բնապահպան» տիտղոսը:

1988-ի անավոր երկրաշարժից հիմնովին ավերվել էր նաև Եսայանների տունը: Նրանք էլ գյուղի անցուղարձից հեռու տնակ են դրել ու մինչև այժմ կառուցելը ապրել անտառի փեշին՝ մութ ու ցուրտ տարիներին անգամ ոչ մի առողջ ծյուղ չկտրելով անտառից. «Մենք վառելու համար չորացած ու անպետք ծյուղերն ենք կտրում, մարդն իրավունք ունի անտառ մտնել միայն հատապտուղ հավաքելու, իսկ եթե ցանկանա ծյուղ կտրել, պայմանը գիտի կտրել միայն չորացած ծյուղերը»: Այս համոզմունքով էլ նրանք խոստացան ինչ գնով էլ լինի պահպանել 70 հա դեռևս չհատված անտառը:

անտառը չլինի, գյուղում անասուն չի մնա»,- իր մտահոգությունն է հայտնում Բարսեղ Եսայանը: Եսայանների հինգ զավակները նորոգ տներ ունեն գյուղում, սակայն ծերերը տնակում են ապրում, պահպանում են շրջակայքն ու անտառը: Նրանք համոզված են, որ անտառին ձեռք տվող չի լինի. քանզի պահպանության գործին լծվել են նաև շները: Ընտանիքում յուրաքանչյուրը գիտի, որ անտառը հարստություն է: «Անտառը պետք է պահպանել, որովհետև անտառն էլ մեզ է պահում. վայրի խնձոր, տանձ ենք հավաքում, ծմեռվա համար պահածո փակում»,- ասաց տիկին



«Առաջին մեծ կոտորածը 1994-ին էր. ֆիրմայիների հետ,- հիշում է տան մեծը 79-ամյա Արմենակ Եսայանը.- եկել էին թղթերով, տարածքի պատկերով և նշումներով, թե որ ծառը պետք է կտրվեր: Մենք ամբողջ ընտանիքով կանգնեցինք, մեզնով պարիսպ սարքեցինք և պայման դրեցինք, որ եթե այդ կացնով կարողանան մեր ձեռքերը կտրել, ուրեմն ծառ էլ կկտրեն: Երկար համաձայնեցինք, բայց իրենց ուզածին չհասան...»: Այժմ 70 հա անտառը հասել է 130 հա-ի: Ընտանիքը դրանով չի բավարարվում, ցանկանում է վերականգնել հատված անտառը: Նրանք հավաստում են, որ չորացած ծյուղերը լիովին բավական են չգազիֆիկացված բնակարանները տաքացնելու համար: «Միայն չորացած ծյուղերը կտրելով անտառն էլ է նորանում, փարթամանում, էլ ինչի՞ վնաս տանք մեզ ու անտառին: Իսկ չորացած ծյուղերը անպայման պետք է կտրել. եթե գյուղացին չկտրի, անտառապահը հո կկտրի»,- անկեղծորեն ասում է մեծ որդին՝ Սեյրոբան: «Պատկերացնում եք, եթե

Սեդան: Նա մեզ հյուրասիրեց իր եփած վայրի տանձի մուրաբայով: Բնապահպանների ընտանիքի հետ բարեկամացել է իսաչիկ Գարությունյանը: Նա բռնցքամարտիկ է, աշխարհի տարբեր ծայրերից հաճախ ծաղիկներ է բերում հայրենիք: «Տեսնելով այս հրաշք բնությունը և հեռվում երևացող տնակը՝ ես հասկացա, որ ճիշտ հասցեով եմ եկել: Դեռ մի քանի ժամ անց կացրի բնության գրկում և քաղաք վերադարձա վերածնվածի պես: Գինա էլ, երբ կազդուրվելու կարիք եմ գզում, գալիս եմ այս գողտրիկ անկյունը, զրուցում եմ ինքս ինձ հետ ու բնության հետ»,- ասում է իսաչիկ Գարությունյանը: Բնապահպանները հաճախ են հյուրեր ունենում: Արդեն սովորական է դարձել անցորդների գարնանցած հայացքներին ու հարցերին պատասխանելը: Որպես ավանդույթ՝ այդ գրույցը տեղափոխվում է սեղանի շուրջ, որտեղ նրանք պատմում են, թե ինչպես է սկսվել անտառի պահպանության գործը: Իսկ թե քանի անգամ են նրանք պատմել այդ պատմությունը, երևի չեն էլ հիշում...

ՆԵՒԻ ԳՎԹՅԱՆ

Մարդու իրավունքների կրթության ազգային ուսուցողական դասընթաց

Եվրոպայի խորհրդի երիտասարդության և սպորտի հարցերի տնօրինության մարդու իրավունքների կրթության ազգային ուսուցողական ծրագրերի շրջանակներում Հայաստանում սեպտեմբերի 10-ին մեկնարկեց մարդու իրավունքների կրթության 5-օրյա ազգային ուսուցողական դասընթացը:

«Ակտիվ երիտասարդ քաղաքացիների նախաձեռնություն», «Բոլորը՝ տարբեր, բոլորը՝ հավասար» քարոզարշավի ազգային կոմիտեի, «Թրեյներների ազգային թիմ», «Ժողովրդավարական նախաձեռնությունների երիտասարդական կենտրոն», «Համաշխարհային անկախ երիտասարդական միություն» և «Հայկա-



Ծրագրի պատճենակալ բացումը տեղի ունեցավ սեպտեմբերի 10-ին ժամը 10-ին, վաճառոր քաղաքի «Ծիծեռնակ» ճամբարում: Բացմանը ողջունի խոսքով հանդես եկան Եվրոպայի խորհրդի Բուդապեշտի երիտասարդական կենտրոնի տնօրեն Անտես Ռոտենմանը, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերով փոխնախարար Արթուր Պողոսյանը, Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնի նախագահ Գևորգ Մանուկյանը, Լոռու մարզպետարանի սպորտի և երիտասարդության հարցերի պատասխանատու Հովհի Թադևոսյանը: Ծրագիրը իրականություն է դարձել

կան սահմանադրական իրավապաշտպան կենտրոն», հասարակական կազմակերպությունների համագործակցության արդյունքում: Ծրագիրն մասնակցում էր շուրջ 40 ակտիվ երիտասարդ՝ ՀՀ մարզերից և մայրաքաղաքից: Անտես Ռոտենմանը հանդիպում ունեցավ նաև ՀՍԻԿ անձնակազմի և հայերեն թարգմանված «Կողմնացույց» ձեռնարկի խմբագրակազմի հետ:

Սեփ. լրատվություն

էջ 3

Ուստի՝ կառավարությունը, բարձր գնահատելով «Առաքելություն Հայաստան»-ի դերը երկրի սոցիալական քաղաքականության մեջ և ձգտելով չկորցնել սոցիալական ոլորտում վերջինիս կողմից ներդրած լուրջ համակարգը, քայլեր ձեռնարկեց՝ գործընկերային հարաբերություններ ստեղծելու կազմակերպության հետ: 2007 թվականից սկսած՝ կառավարությունը ստանձնեց կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների մի մասի ֆինանսավորումը պետական բյուջեից: Սա աննախադեպ երևույթ էր հասարակական կազմակերպությունների սեկտորում: Փաստորեն՝ «Առաքելություն Հայաստան»-ը առաջին հասարակական կազմակերպությունն է, որն արժանացավ կառավարության վստահությանը՝ դառնալով վերջինս գործընկեր՝ դրանով էլ ավելի ամրացնելով իր դիրքերը ոչ միայն տարածաշրջանային, այլև սոցիալական ոլորտի միջազգային խոշոր կազմակերպությունների շարքում:

ԱՆԻ ԳԱՄՊՐԵԱՆ

«Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի հասարակայնության հետ կապերի պատասխանատու

«Ես եւ շրջակա աշխարհը» առարկան տարրական դպրոցում

Այս ուսումնական տարում 12-ամյա կրթության տարրական դպրոցի երկրորդ դասարան մուտք կգործի «Ես և շրջակա աշխարհը» առարկան, ինչը նորություն է դասվարներիս համար:

Միջնակարգ կրթության համար սահմանված չափորոշիչ համաձայն «Ես և շրջակա աշխարհը» ուսումնական առարկան «Հասարակագիտություն» և «Բնագիտություն» բաժինները ներառող պարտադիր առարկա է 2-4-րդ դասարաններում: Սա մարդու սոցիալական ինքնագիտակցության ձևավորմանն ուղղված և անհրաժեշտ է, որ հենց այս տարիցում դասավանդվեն հանդուրժողականության, արժանապատվության, բարոյացանկության ձևավորմանն ուղղված ուսումնական թեմաներ: Երեխան այս տարիցում արդեն պետք է կոլեկտիվի լիիրավ անդամ լինի: Համարակրթական նպատակների և կրթական բարեփոխումների տեսանկյունից առարկայի մեջ պետք է կարևորել այնպիսի թեմաների ներառումը, որոնք կապահովեն երեխայի՝ որպես ձևավորող անհատականության սոցիալականացման, ինչպես նաև աշխարհաճանաչման, հասարակության մեջ իր տեղն ունենալու, դրա միջոցով դեպի իրավական պետություն տանող ճանապարհի առաջին քայլերն անելու պայմաններ:

Դասընթացը կազմված է երեք մասից, նախատեսված է 2-4-րդ դասարանների համար, հատկացված է հետևյալ ժամաքանակը՝

- 2-րդ դասարանում-շաբաթական 1 ժամ. տարեկան՝ 32 ժամ,
- 3-րդ դասարանում-շաբաթական 1 ժամ. տարեկան՝ 34 ժամ,
- 4-րդ դասարանում-շաբաթական 2 ժամ. տարեկան՝ 68 ժամ:

2-րդ դասարանում՝ «Ո՛վ եմ ես», «Ես և իմ ընտանիքը», «Ես և դպրոցը», «Իմ ընտանիքը», «Իմ սուրճը», «Իմ բակը», «Իմ փողոցը», «Քաղաք և գյուղ», «Բնությունը իմ շուրջը», «Առողջություն և անվտանգ կենսագործունեություն» թեմաների ուսուցմամբ նախատեսված է հստակեցնել աշակերտների պատկերացումներն իրենց ներուժի, ընտանիքի, բակի ու ընկերների մասին, ընդգծել սրտազանգվ վերաբերմունքի և փոխօգնության կարևորությունը, ձևավորել արդյունավետ կենսագործունեության, հասարակության և բնության մեջ օրինակելի վարքագիծ դրսևորելու հմտություններ: 3-րդ դասարանում՝ «Ես և ուրիշները», «Ինչպես կազմակերպել իմ կյանքը», «Երկիր մոլորակը», «Մեր առողջությունը», «Անվտանգությունը մեր շրջապատում» թեմաների ուսուցման անհրաժեշտ է աշակերտներին՝ գիտակցելու սեփական կարողություններն ու նախափորձությունները, սահմանելու հեռահար և մոտակա նպատակներ և դրանց իրագործման ուղիները, ձևավորել որոշումներ կայացնելու, ժամանակը ճիշտ կազմակերպելու, գեղագիտական հայացքները զարգացնելու, առողջ արարելակերպ սահմանելու, բնական աղետների ժամանակ պաշտպանական միջոցներից օգտվելու հմտություններ: 4-րդ դասարանում՝ «Բնություն», «Մարմիններ»,

«Նյութեր», «Մասնիկներ», «Մեր հայրենիքը», «Շանապարհորդություններ և աշխարհագրական հայտնագործություններ», «Ես և հասարակությունը» թեմաների ուսուցմամբ աշակերտները ծանոթանում են մեր մոլորակին, երկրի հասարակական կյանքին, նախնական պատկերացում են կազմում ժողովրդավարության, քաղաքացիական հասարակության, մարդու իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև արդյունաբերության, գիտության, մշակույթի և կրթության մասին: դասընթացի այս մասում աշակերտների ուշադրությունն ուղղվում է մարդ-բնության կապին:

«Ես և շրջակա աշխարհը» առարկան լուծում է այս բոլոր խնդիրները: Ստորև շարադրված են առարկայի նպատակները.

1. աշակերտներին ծանոթացնել շրջապատող աշխարհին, բնական-հասարակական երևույթներին, մարդկային հարաբերություններին
 2. կրթել միջամտային հարաբերությունների հաստատման, շրջակա աշխարհի և ինքնաճանաչման ունակություններ
 3. նպաստել սեփական արժանապատվության, հանդուրժողականության, շրջապատի մարդկանց նկատմամբ բարոյացանկա վերաբերմունքի ձևավորմանը
 4. օգնել դառնալու կոլեկտիվի լիիրավ անդամ, ձևավորել և զարգացնել ինքնուրույն որոշումներ կայացնելու, սեփական արարքները վերահսկելու, դրանց համար պատասխանատվություն կրելու գիտակցություն
 5. նպաստել աշակերտների ինքնարևութանն ու ինքնարտահայտմանը
 6. ձևավորել երկրի պատմամշակույթային արժեքների ժառանգորդը լինելու գիտակցություն:
- Առարկայի ուսուցումն անհատին ինքնաճանաչման լայն հնարավորություն է տալիս: Դեռևս մ.թ.ա 5-4-րդ դարերում Առկատեազ գտնում էր, որ մարդն առաջին հերթին պետք է ճանաչի ինքն իրեն, քանի որ նրա թեությունների պատճառն առավելապես ինքնաճանաչման պակասն է: Առարկայի ուսուցումն ինքնաճանաչման միջոցով երեխայի մեջ վաղ տարիքից սերմանում է արժանապատվություն, ինքնավստահություն, հանդուրժողականություն: Այս որակների զարգացման նպատակով կարելի է օգտագործել մանկավարժական նորագույն մեթոդներ՝ կիրառելով դերախաղը ու շրջանաձև գրույցը:
- Դ) Գրողակազմներին հանձնարարվում է կազմել «Ո՛վ եմ ես» գիրքը:
- Այս աշխատանքի ելությունն այն է, որ որոշակի ժամանակահատվածում ինքնաճանաչման և ինքնավստահության ձևավորման նպատակով երեխան պետք է գիրք կազմի իր մասին: Երեխաներից մեկը գիրքը սկսել էր ինքնանկար գրել շապիկին նկարելով: Գիրքը նա կազմել էր իր անձնական նկարներով, պատմամեծերով և բանաստեղծություններով: Աշխատանքից հետո երեխաների

հետ գրույցի ժամանակ նրանց մեջ զգացվում է ինքնավստահություն, իրենց կատարած աշխատանքի կարևորության գիտակցում:

բ) Առարկայի ուսուցման ժամանակ կիրառվում է նաև շրջանաձև գրույցը: Այսպես՝ երեխաները նստում են շրջանաձև, ուսուցիչը դիմում է նրանց՝ Ամենից շատ իմ մեջ իմն դուր է գալիս...

Ուզում եմ դառնալ...
Իմ սիրելի խաղը...
Իմ ամուսնը նշանակում է...
Ուզում եմ իմանալ...
Վշտանում եմ, երբ...
Ուզում եմ դառնալ ավելի...
Հույս ունեմ, որ...

Առաջարկվող մեկնարկային թեմաները գրույցի մեջ են ներգրավում աշակերտներին սկզբում՝ առանձին-առանձին, ապա՝ խմբով:

գ) Առաջարկանք՝ «Իմ ուրվակարծիքը այսօր»
Մեծ թղթի վրա պատկերվում է յուրաքանչյուր երեխայի ուրվակարծիքը: Աշակերտը դրա վրա պետք է նկարի իր մարմնի մասերը, ապա պիտակի վրա գրելով իր անձնային և ֆիզիկական հատկանիշները (ամուսն, հասակը, քաշը, ինչ է ամենից շատ ուզում սովորել և ինչով զբաղվել)՝ ամրացնի այն թղթին: Բոլոր թղթերը փակցվում են պատին, դա հնարավորություն է տալիս աշակերտներին ավելի լավ ճանաչել իրենց և միմյանց:
դ) Երեխաները դերախաղի ժամանակ քննարկում են հետևյալ հարցերը.
Լսողությունն օգնում է ինձ...
Տեսողությունն օգնում է ինձ...
Հոտառությունն օգնում է ինձ...
Շռշուկն է ինձ օգնում է ինձ...
Ունելիքը համտեսելով՝ ես կարող եմ...

Սրտ ունեցող երեխաների դեպքում հարցերը վերաձևակերպվում են՝ հարմարեցվելով և հաշվի առնելով նրանց խնդիրները (օրինակ՝ Չեմ կարող լսել, բայց ես այնպես սա ես եմ և կարող եմ... և այլն):

Երեխաների հետ կազմակերպվում են նաև խմբային աշխատանքներ, խաղեր:
Ի) Իմ տիկնիկային ընտանիքը.
Յուրաքանչյուր երեխա տիկնիկներից ընտանիք է կազմում և իրեն համարում տիկնիկներից մեկը: Տիկնիկներին ամուսններ է տալիս և բացատրում նրանց փոխադրությունները:

զ) Երևակայական ընկերը.
Աշակերտին հանձնարարվում է նկարել իր երևակայական ընկերը՝ նկարագրելով, թե ինչպիսին է նա: Տարրական դպրոցում հաճախապես է նաև պատմվածքների կիրառման մեթոդը: Երեխաները կարող են դասեր քաղել, եզրահանգումներ կատարել և մտապահել դրանք, եթե ներքևում կապվում են հեքիաթների գործող անձանց: Պատմվածքների միջոցով նրանց կարելի է ծանոթացնել երեխայի և մարդու իրավունքներին, քննարկել իրավունքների խախտման դեպքերը:



Երեխաների համաշխարհային խորհրդատու Նորվեգիայում, 2008թ. փետրվարի 17-21

2008թ. փետրվարի 17-21-ը Նորվեգիայի Ստեվենսեզը քաղաքում տեղի կունենան Շրջակա միջավայրի վերաբերյալ երեխաների համաշխարհային խորհրդատու: Կազմակերպիչը ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիրն է՝ Նորվեգիայի «Երիտասարդական օրակարգ 21» հիմնադրամի հետ համագործակցությամբ: Համաժողովին կնասնակցեն 10-14 տարեկան շուրջ 1000 երեխաներ ավելի քան 100 երկրներից:

Խորհրդատու ընտրվել է 1992թ. ՈՒՊ դե ժանեյրոյի երկրի զագաթատուղիի և 2002թ. ՅՈՒԱՆԵՍԵՍԻ ՎԵՍՏԵՐԻ ՎԱՅՐՈՒՆ զագաթատուղիի ընդունած որոշումներով:



Նրանցում ասվում է, որ **երեխաների կարծիքները պետք է հաշվառվեն շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների կայացման ընթացքում:**

Խորհրդատու ընտրվել երեխաներին կօգնի ընթացել շրջակա միջավայրի խնդիրներին՝ նրանց համար ապահովելով մեծ լսարան, որպեսզի փոխանակեն փորձն ու կարծիքները և միասնականորեն բարձրաձայնեն իրենց մտազորությունները շրջակա միջավայրի խնդիրների վերաբերյալ: Այն կիրախուսի երեխաներին դպրոցում և համայնքում ձեռնարկել և իրագործել շրջակա միջավայրին վերաբերող տեղական ծրագրեր: Խորհրդատու ընտրված երեխաները մի շարք հետևյալ թեմաներով՝ ենթոգի, կենսաբազմազանություն, ռեսուրսներ, ջուր և որոշումների կայացում: Կայացված որոշումները կիրագործեն իրենց երեխաները:

ԸՆԴՈՒՆՄԱՆ ԶԱՔԻՅՆՆՆԵՐ ԿՈՒՍԱՅԻ ՄԱՐԿ, Զ. ԱՐՈՎՅԱՆ

ՊՈՆԶԻԱ

Վահե Արսեն

Ծնվել է 1978թ. Երևանում: Ավարտել և ներկայումս դասախոսում է Երևանի պետական համալսարանում: Լա մեր ժամանակի նոր պոետներից է, ում ձայնը չի կաշկանդվում գրական ոչ մի չափանիշով: Եթե փորձենք պատկերավոր լեզվով բնորոշել նրա պոեզիան, ապա այն կհամեմատենք խխունջի լքված պատյանի հետ, որն իր մեջ է ընդունում և ետ՝ աշխարհին վերադարձնում կյանքի բազմաձայն եղելությունները որպես արծազանք, և եթե այդ արծազանքը մեծամասամբ մոայլ ու վանող է ստացվում, ապա աշխարհը մի ոչ ավելորդ անգամ մտահոգվելու առիթ ունի...



Երևանյան շտրիխներ

Շչակ, աղմուկ,
տապալկած ռեզինի հոտ,
անշունչ շարժիչի աճող հորդոր:
Խտացող օդ,
ժանգոտ ոտքեր,
նույն ժամերին, նույն փողոցով,
անցնող-դարձող անթիվ մտքեր:
Մրտտ արև, մեռնող կակաչ,
մեքենաների կատաղի աճ:
Քնկոտ տաքսի մայրին քիկնած,
երթողային ավտոբուսին հասնելու
անմեկնարկ վազք:
Մուրացկանի բիբերում՝ մանրադրամային հրաշք,
ոստիկանի գլխարկին պարզված ձեռքի շտրիխ-
նախշ:
Նորածնի սպասող գերդաստանի ուրախ շշուկ...
Գիշերային աղջիկների
բիբերի կաշառված բռնիչք
և հաստավիզ պաշտոնյայի
հայելապատ Grand Jeep,
կատվի մռռոց,
չան կույր հաչոց,
պառլամենտում աբոռի տակ պառկելու
զզվոտոց:
Միտղ սրտեր,
բթված կրքեր,
ամուսնանալու սովորություն
տկլոր լվացքի պարաններ:
Այստեղ՝ Մաշտոցի 20-ում,
ես, անցուդարձ, բե՛զ էի գրանցում:



Անկախության օրը

Պայծառ օր էր,
կարծեցյալ անկախության տոնն էր,
անհայտության հրապարակում
պար-ծաղր-բազմաժանր
անտեղյակ ուրախություն էր տարախավ,
և գիշերվա մութ երկնքում,
որ հեռուստացույցի անհոսանք էկրան էր
հիշեցնում,
արևածաղկի փուչ սերմեր էին պայթում
գույնզգույն աստղերով:
Ամեն ինչ ուրախ էր, ամհոզ և փայլուն,
ես հոգուս ձին խարսխեցի մտակա կանգառում
և հանց օդ ցնդեցի աստղածուխ փողոցում:

Գիշերային խտացումներ

Մութ գիշերում՝ հայիտյանքներ,
ծիծաղ կտի,
անցողիկ բուրմուռ փտած շրթներիկ:
Ես ներկա եմ այդ փողոցում,
փնտրում եմ միակ ընկեր կյանքի
կամ՝ ընդամենը մի գիշերվա:
Կյանքը ի՞նչ է,
լույ մեկ վայրկյան,
մի գիշերը կյանք է արդեն,
եթե պահը չկորցնես՝
կանես մեկ հեղափոխություն թավշյա,
մեկ գիշերում քո խրճիթը
հողի խորքում տեղավորված
բաբելոնյան աշտարակին վազանցելով
կրարծրանա մինչև Աստված:



Իսկ ստամոքսը չափով փորքրիկ,
ունենալով աճելու մեծ ցանկություն,
ժամկետանց պահածոն դեռ չմարսած
սև խավիար կխտստանա իր նոր ազգին
և ծննդատուն կպանա՝
դեպ ապագան էստաֆետող վզիկների
վարկ ամուռով նոր վզնոցներ շնորհելու,
որ ծանր են մեքենայից իր գրասպաստ.
անգամ եթե ինքը՝ տերն է՝ մեթր նստած:
Գիշերային խտակցություն ներկա եղա,
ասում են երկրագունդը մեկ մարմին է բնության
հետ,
ունի թրքեր,
և անոթներ արյունատար,
ունի հետույք, այն համբուրող
մաս բացիլներ բազմատեսակ:
Այստեղ հնչում են հայիտյանքներ
մեծ ու փոքր ջոջեր-պոչերի հասցեին:
Երկրագունդը ունի ձեռքեր,
ուրեմն՝ ինքն էլ է կաշառված,
թե չէ՛ ինչու՞ մաստակը շաքարազեղծ
երեխային հաստափորի
որպես նվեր գրանիտե բթության ու
ճարպոտած անդորրի
համար,
իսկ մյուսին սարի ծամոն հավաքելիս,
թուրքի փամփուշտն է է
հետապնդում՝
ինչպես գիրք գողին սպանում են հենց իր
գրքով,
ու մեղալ ծեփում գեքը ստեղծողի կրծքի
խտացված հատվածներին,
ինչպես յոթանասուն տարվա բնից հետո
զարթնողների բնական լույսի փոխարեն
քնաբեր կոճակներ են հրամցնում:

Ինչպե՞ս մեր երեխաների գլուխը
հեռուստացույց մայելիս չի պայթում,
ուր մարդուն անդամահատում են ասես
հարիսայի հավ,
իսկ դիտողը ակամա դառնում է դահիճ,
ինչպես ճշմարտության ձայները նկուղներում են
միայն,
ու ամենօրյա անցումներում ստախտներ
որքան ուզես,
և մարդիկ իրար սիրում են գույնով մեքենայի ու
թվով արտադրության,
իսկ երկաթի տակ կանաչ թրթեր կան
բազմաթիվ:
Գրելուս ողջ ընթացքում ես ժպտում եմ,
ուրեմն մարդիկ դեռ կանաչը սիրում են,
չնայած պայքարում են դրա դեմ,
սարքում նոր մեքենաների
նոր կայանատեղիներ
ու դեռ սիրո՞ւմ են կանաչը:
Ես դեռ չեմ ընդհատում
ներկայությունս այս փողոցում,
ծառերը պար են բռնել
տրոլեյբուսի լարերի հետ,
իսկ տանիքների անտեմաները
ասես օտար քաղաքակրթության
գաղտնի ներկայությունն ապացուցեն:

Մայրից վեր՝ եռուզեռ

Գարը բորոտամարմին օսկար ստացավ,
տաքացվող գոլալը դարձավ իմաստ կյանքի,
բարոյական օրեքները վտարվեցին ուղեղի
աղբարկղը՝
թողնելով միայն ամիս ամսաթիվը:
Իսկ մայրից վերև եռուզեռ էր,
առք, վաճառք, փոխանակում:
Բողոքին պետք էր լավ օրերի երշիկ,
լճացման յոլից գտված հայրենական պանիր,
ֆրանս-հայկական կոնյակի տակառի համը,
հունա-հայկական կախաղանի թավշյա փող-
կապը,
անգլո-հայկական ջրի սառնությունը
տաքարյուն,
ռուս-հայկական հոսանքով ստուգված
հնդկա-հայկական կատաչուկի ձգման անչափ
չափը,
որ գիշերները լայրուն ամալի է վերածվում,
մեր հին ազգի համբերության մազանոթները
խցանում,
իսկ այրերը պաշտոնատար վաղուց մերժում են
լատեքսները

փրկարար,
ապա և մեր ավանդապահ ու հին ազգից
անվերջ ծնվում են լոթի-փոթի,
ուտող խմող, ջերը միշտ փող,
բութ ու լալոչ, սիգնալը բոշ
տգրուկները անփավոր:

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Հարգելի՛ ընթերցող, եթե ցանկանում եք Ձեր դիտարկումներով օգնել «Իրավական մշակույթ» երկշաբաթաթերթի առավել արդյունավետ ու նպատակային աշխատանքին, խնդրում ենք լրացնել սույն ձևաթերթիկը և ուղարկել խմբագրություն: Ձեզնից ընդամենը պահանջվում է՝ լինել անաչառ և արագ արձագանքել: Կանխավ շնորհակալ ենք:

1. Ըստ Ձեզ՝ մեր հասարակության մեջ զարգացած է իրավական մշակույթը:

- Ոչ
- Մասամբ
- Այո

2. Հասարակությունն իրազեկ է իր իրավունքներին:

- Ոչ
- Մասամբ
- Այո

3. Թերթը խրախուսում է մարդու իրավունքների պաշտպանությունը:

- Չի խրախուսում
- Մասամբ
- Խրախուսում է

4. Թերթն արձարծն է հասարակությանը հուզող հարցեր:

- Ոչ
- Մասամբ
- Այո

5. Ի՞նչ բեմաների շուրջ հողվածներ կցանկանայիք կարդալ մեր թերթի էջերում:

Կարող եք լրացնել նաև Ձեր տվյալները՝

անուն, ազգանուն _____

հասցե _____

հեռախոս _____

էլ. փոստ _____

Սիրելի՛ ընթերցող, լրացված ձևաթերթիկը խնդրում ենք ուղարկել ՀՄԻԿ գրասենյակ՝ ԳՅ, Լոռու մարզ, Վանաձոր, Շիրակացու 1-ին նրբ., թիվ 2 հասցեով, մինչև օգոստոսի 31-ը՝ ժամը 17:00: Կարելի է պատասխաններն ուղարկել նաև էլ փոստով՝ lc@acrpc.am կամ ֆաքսով՝ +374(322) 4-47-81:

ՈՒ Շ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն



Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնի (ՀՄԻԿ) Մարդու իրավունքների հայկական դպրոցը հայտարարում է ընդունելություն հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման 2008-2009 թթ. մեկամյա դասընթացի համար: Դասընթացը կազմակերպվում է եվրոպական հանձնաժողովի հայաստանյան գրասենյակի օժանդակությամբ և ՀՀ ԿԳ նախարարության Կրթության ազգային ինստիտուտի համագործակցությամբ:

Դասընթացի նպատակը իրավական առարկաների՝ «Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական կրթություն», «Պետություն և իրավունք» ուսուցիչների մասնագիտական որակավորման բարձրացումն է՝ տեսական գիտելիքների և մեթոդական հմտությունների բարելավման միջոցով:

Ուսման ընթացքում սովորողներն ապահովվում են անհրաժեշտ զրկանությամբ, օգտվում ՀՄԻԿ Մարդու իրավունքների գրադարանային ցանցի ծառայություններից:

Դպրոցը հաջողությամբ ավարտելու դեպքում սովորողն ստանում է վկայական իրավական առարկաների մասնագետի որակավորմամբ:

Ընդունելությունը կատարվում է մրցութային կարգով:

Դիմել կարող են

- Հանրակրթական դպրոցի այն ուսուցիչները, ովքեր.
 - դասավանդում են «Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական կրթություն», «Պետություն և իրավունք» ուսումնական առարկաները.
 - սկսած 2008-2009 թթ. ուս. տարվանից՝ առնվազն 2 տարի պետք է դասավանդեն «Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական կրթություն», «Պետություն և իրավունք» ուսումնական առարկաները:

ՀՄԻԿ-ը հոգում է հետևյալ ծախսերը.

1. բնակավայր — Վանաձոր, Վանաձոր — բնակավայր ուղեվարձերը (վճարման համար հիմք են հանդիսանում ուղեկտրոնները),
2. սնունդ,
3. կացարան:

Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

- Դիմում-հարցաթերթիկ.
- Ուսումնական հաստատության ղեկավարի կողմից տրված հարցաթերթիկ-երաշխավորագիր.
- Ինքնակենսագրություն (CV).
- Բուհ-ի դիպլոմի պատճեն.
- Հարակից այլ դասընթացների (սեմինարների) մասնակցության վկայականների պատճեններ (եթե կան).
- Անձնագրի պատճեն.
- 3/4 չափի մեկ լուսանկար (ֆաքսով և էլ.փոստով ուղարկված լուսանկարներ չեն ընդունվում):

Փաստաթղթերից որևէ մեկի բացակայության դեպքում դիմումը չի քննարկվում:

Դիմում-հարցաթերթիկը և հարցաթերթիկ-երաշխավորագիրը կարելի է ստանալ www.acrpc.am ինտերնետային էջից կամ ՀՄԻԿ գրասենյակից:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել ոչ ուշ, քան մինչև 2007թ. նոյեմբերի 23-ը, հետևյալ հասցեով՝

Հայաստանի Հանրապետություն, ք. Վանաձոր, Շիրակացու I նրբանցք, թիվ 2

Գեոախոս՝ (322) 22967, 44781 ֆաքս՝ (322) 44781

Էլ.փոստ՝ acrpc@acrpc.am; apapikyan@acrpc.am:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Կրթության բաժնի վարիչ Արայիկ Պապիկյանին՝

apapikyan@acrpc.am:

Թերթը հրատարակվում է Եվրոպական հանձնաժողովի ֆինանսական օժանդակությամբ: Բովանդակության համար պատասխանատվությունը կրում է միայն Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը: Թերթը ոչ մի դեպքում չի կարող դիտվել որպես Եվրոպական հանձնաժողովի դիրքորոշումն արտացոլող փաստաթուղթ:

Հրատարակության 9 տարի
Հիմնադիր և հրատարակիչ
Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն
ԳՅ, 2002 թ. Վանաձոր, Շիրակացու 1-ին նրբ., թիվ 2
Գեո.՝ +374 (322) 2-29-87
Ֆաքս՝ +374 (322) 4-47-81
Էլ. փոստ՝ lc@acrpc.am Համացանցի էջ՝ www.acrpc.am

Գլխավոր խմբագրի պաշտոնակատար՝ Գևորգ Մամուկյան
Խմբագիրներ՝ Պեն Հակոբյան, Ադրինե Թորոպյան
Համակարգչային ծախվող՝ Արմեն Մահակյան
Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում:
Մեջբերումներ անելիս կամ արտատպելիս հղումը «Իրավական մշակույթին» պարտադիր է:
Հրատարակումների թվաքանակությունը կարող է չհամապատասխանել ինքնագրության կարծիքին:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Ստորագրված է տպագրության 2007թ.09.12:
Տպաքանակը՝ 2000:
Տպագրվել է «Չանգակ-97» հրատարակչատանը:
*Իրավական մշակույթ
Legal Culture
Правовая культура
Տարածվում է անվճար*